ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

5 տարվա ամփոփում

Կանանց հիմնադրամի մասին

Հիմնադրված 2018թ.՝ Հայաստանում կանանց հիմնադրամը տեղական դրամաշնորհային կազմակերպություն է, որն աջակցում է Հայաստանում կանանց և աղջիկներին՝ կարողությունների զարգացման, ֆինանսական աջակցության տրամադրման և ֆեմինիստական շարժման զարգացման միջոցով:

2020 թվականից սկսած՝ Հիմնադրամն իրականացնում է գործընկերության գնահատումներ՝ պարզելու գործընկերների բավարարվածության մակարդակը հիմնադրամի հետ համագործակցությունից, ինչպես նաև բացահայտելու ձևավորված գործընկերության մարտահրավերներն ու բարելավման հնարավորությունները: Դրանք օգնում են նախապես հասկանալ ապագա համագործակցության ուղղություններն ու ներգրավված կողմերի կարիքները, ինչպես նաև համեմատել տարբեր տարիների ստացված գնահատումների արդյունքները:

Գործընկերների կողմից Կանանց հիմնադրամի՝ առավել գնահատված կարողությունները

2020, 2022, 2023, 2024 և 2025 թվականներին իրականացված գործընկերության գնահատումների արդյունքները ցույց են տալիս, որ գործընկերների մեծամասնությունը շատ գոհ է եղել Կանանց հիմնադրամի հետ համագործակցությունից: Նրանք հատկապես կարևորել են Հիմնադրամի կարողությունը՝ խրախուսելու և մոտիվացնելու գործընկերներին, ստեղծելու արդյունավետ հաղորդակցություն գործընկերների միջև, ապահովելու տարբեր կարծիքների բաց և փոխադարձ քննարկման հարթակ, ինչպես նաև ցուցաբերելու ճկունություն և նվազագույն պահանջներ հաշվետվությունների մշակման և ներկայացման գործընթացում:

Գործընկերների կողմից Կանանց հիմնադրամի՝ առավել արժևորված առանձնահատկությունները

Գնահատումների բոլոր տարիներին գործընկերները հատկապես ընդգծել են Հիմնադրամի ամուր կապը Հայաստանում ֆեմինիստական շարժման աջակցության հետ: Այս առանձնահատկությունը շարունակաբար ունեցել է բարձր գնահատում՝ 2025 թվականին զբաղեցնելով առաջին հորիզոնականը, իսկ 2024, 2023, 2022 և 2020 թվականներին գտնվելով առաջատար կամ գրեթե առաջատար դիրքերում: Այս շարունակականությունը վկայում է Հիմնադրամի կայուն ինքնության և ֆեմինիստական արժեքներին ու սոցիալական փոփոխություններին ուղղված երկարաժամկետ հանձնառության մասին:

Մեկ այլ բարձր գնահատված առանձնահատկություն է Հիմնադրամի բաց և ոչ բյուրոկրատական համագործակցության ոճը: Այն 2025թ. զբաղեցրել է երկրորդ, 2024թ.՝ առաջին հորիզոնականը, իսկ 2023, 2022 և 2020 թվականների գնահատումներում կրկին եղել է գործընկերների կողմից շատ կարևորված՝ զբաղեցնելով առաջատար հորիզոնականներ գնահատման սանդղակում: Այս հանգամանքն արտացոլում է մեր գործընկերների շրջանում ճկունության և փոխադարձ վստահության վրա հիմնված համագործակցության նկատմամբ շարունակական բարձր գնահատանքը: Ավելորդ բյուրոկրատիայի բացակայությունը շարունակում է մնալ Հիմնադրամի հիմնական ուժեղ կողմերից մեկը՝ նպաստելով արդյունավետ և հարմարավետ համագործակցություններին:

Այլ առանձնահատկություններ, ինչպիսիք են հավասարության սկզբունքի կիրառումը և հասարակության մեջ հաճախ տաբու համարվող թեմաների ու խնդիրների վերաբերյալ ազատ արտահայտվելու հնարավորության ապահովումը, տարբեր տարիներին ունեցել են փոփոխական դիրքեր գնահատման մեջ (սկզբում լինելով ավելի ցածր հորիզոնականներում, իսկ վերջին տարիներին՝ ավելի բարձր): Սա թույլ է տալիս ենթադրել, որ Կանանց հիմնադրամը շարունակաբար աշխատում է իր ռազմավարությունների կատարելագործման ուղղությամբ և ձգտում է արձագանքել գործընկերների բոլոր կարիքներին:

Մարտահրավերներ

Գործընկերների կողմից առանձնացված մարտահրավերները կարելի է խմբավորել երկու հիմնական կատեգորիաների՝ արտաքին գործոններ և գործառնական ու կազմակերպչական մարտահրավերներ:

Արտաքին մարտահրավերների շարքում գործընկերները նշել են COVID-19 համավարակը, պատերազմն ու տեղահանությունը, ինչպես նաև հանրային դիմադրությունը զգայուն թեմաների նկատմամբ:

Խոցելի խմբերի հետ աշխատող կազմակերպությունները, այդ թվում՝ տեղահանված կանանց, բռնություն վերապրածների, ԼԳԲՏՔ+ կանանց և աղջիկների հետ աշխատող կազմակերպությունները հայտնել են, որ բախվում են հանրային թշնամական վերաբերմունքի, ատելության խոսքի և քննադատության՝ ընտանեկան բռնության, գենդերային հավասարության և կանանց իրավունքների վերաբերյալ հարցեր բարձրաձայնելու պատճառով: Որոշ գործընկերներ նշել են, որ համայնքներում՝ հատկապես մարզային բնակավայրերում, պահպանողական վերաբերմունքը շարունակում է խոչընդոտել բաց երկխոսությանն ու ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Մեկ այլ մարտահրավեր, որը նշվել է որոշ գործընկերների կողմից, աշխատակազմի հոգնածությունն ու հուզական ծանրաբեռնվածությունն է: Տրավմաների, բռնության, խտրականության և ճգնաժամային իրավիճակների հետ անմիջականորեն աշխատող կազմակերպությունները նշել են, որ այս աշխատանքների հուզական պահանջները մշտապես ստեղծում են մասնագիտական հոգնածության և հոգեբանական լարվածության ռիսկեր: Հավանաբար հենց այս հանգամանքն է տարիների ընթացքում նպաստել գործընկերների շրջանում կանանց բարեկեցության և դիմակայունության թեմայի նկատմամբ աճող հետաքրքրությանը:

Գործառնական և կազմակերպչական մարտահրավերները ներառում են՝

- Կազմակերպությունների սահմանափակ ռեսուրսներ, մասնավորապես՝ ծրագրերի իրականացման համար աշխատակազմի և մասնագետների պակաս, լոգիստիկ դժվարություններ և լեզվական խոչընդոտներ, որոնք թիմերից պահանջում են զգալի ժամանակ և էներգիա:
- Ծրագրային հանդիպումների և միջոցառումների համար նախատեսված մշտական տարածքի բացակայություն: Մասնակիցներից մեկը նշել է, որ շատ օգտակար կլիներ, եթե Հայաստանում կանանց հիմնադրամը տրամադրեր նման տարածք՝ հավաքների կազմակերպման բեռը թեթևացնելու նպատակով:

Բոլոր տարիների գնահատումների ընթացքում արձանագրված կարևոր և պարբերաբար կրկնվող մարտահրավերներից են եղել ծրագրերի կարճ տևողությունն ու սահմանափակ բյուջեն, որոնք խոչընդոտում են ծրագրերի երկարաժամկետ արդյունքի և ծառայությունների շարունակականության ապահովումը:

Ակնկալիքներ

Գնահատման ընթացքում մեր գործընկերների կողմից բարձրաձայնված ակնկալիքների մեջ աչքի ընկան մի քանի կրկնվող ակնկալիքներ: Դրանք են՝ համագործակցության հնարավորություններ այլ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, այլ երկրներ փոխանակման այցերի հնարավորություններ, կարողությունների զարգացման և դիմակայունության ամրապնդմանն ուղղված ավելի շատ ծրագրեր, հիմնադրամի կողմից ֆինանսավորման ավելի շատ հնարավորություններ, ինչպես նաև այլ ծրագրերում մասնակցության ավելի շատ հնարավորություններ՝ թե՛ հիմնադրամի, թե՛ այլ գործընկերների կողմից կազմակերպված:

Ավելի հազվադեպ հիշատակված ակնկալիքներից էին իրազեկման ծրագրերի ընդլայնումը և այլ ծրագրերի շրջանակներում համագործակցության հնարավորությունները, հատկապես այն ծրագրերում, որոնք ուղղված են մարգինալացված խմբերի, օրինակ՝ ԼԳԲՏՔ+ անձանց հզորացմանը: Գործընկերները նաև կարևորել են դրամաշնորհային ծրագրերի ժամկետի երկարաձգումը և Հիմնադրամի կողմից կիրառվող պարզեցված դիմումի և հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերի ու մեխանիզմների պահպանումը:

Բացի այդ, գործընկերները ցանկություն են հայտնել ունենալու հանդիպումներ, որոնց ընթացքում հնարավոր կլինի գեներացնել գաղափարներ, անցկացնել քննարկումներ հետաքրքրված կազմակերպությունների և անհատների հետ, ինչպես նաև համատեղ աշխատել հայտերի և առաջարկների մշակման ուղղությամբ: Սա վկայում է ավելի ինտերակտիվ և համագործակցային հարթակների պահանջարկի մասին, որոնք կարող են նպաստել նորարարության և գործընկերային համագործակցության զարգացմանը:

Առաջարկություններ

Հիմնվելով այն մարտահրավերների և ակնկալիքների վրա, որոնք մեր գործընկերները նշել են տարիների ընթացքում, Հիմնադրամի համար ձևակերպվել են հետևյալ առաջարկությունները: Իհարկե, առաջարկությունները տարեցտարի փոփոխվում են, սակայն դրանցից մի քանիսը կրկնվում են: Օրինակ՝ 2020 և 2022 թվականներին հիմնական առաջարկություններն էին՝

- Շարունակել զարգացնել նորարար և ստեղծագործ մոտեցումները ծրագրային առաջարկների մշակման և ներկայացման, ծրագրերի իրականացման, հաշվետվությունների պատրաստման և գնահատման գործընթացներում:
- Ստեղծել փորձի փոխանակման հնարավորություններ գործընկերների համար: Հաճախակի ցանցային հանդիպումներն ու քննարկումները կարող են արդյունավետ միջոց լինել ոչ միայն հիմնադրամի և գործընկերների, այլ նաև գործընկերների միջև համագործակցության ամրապնդման համար:
- Իրականացնել կարողությունների զարգացման ծրագրեր գործընկերների համար՝ ծրագրերի կառավարման ոլորտում, ներառյալ ծրագրային առաջարկների մշակում, մոնիթորինգ, գնահատում և հաշվետվությունների պատրաստում, որպեսզի նրանք կարողանան ավելի մրցունակ լինել նաև խոշոր դոնորների կողմից առաջարկվող դրամաշնորհներին դիմելու համար, որոնք սովորաբար ունեն ավելի կառուցվածքային և ստանդարտացված պահանջներ:

Այս առաջարկությունները պահպանվել են նաև 2023 թվականին, սակայն գործընկերների կողմից առանձնացվել են նաև այլ կետեր.

- Հաղթահարել հաղորդակցման խոչընդոտները՝ ապահովելով լեզվական աջակցություն կամ հաղորդակցման բազմազան ձևաչափեր, որոնք կնպաստեն ավելի սահուն համագործակցությանը:
- Հարմարեցնել հաշվետվությունների ձևաչափերը հետազոտական բովանդակությանը, որպեսզի հետազոտական գործունեությունը ավելի լավ համապատասխանի հաշվետվության պահանջների հետ:
- Կազմակերպել ֆորումներ կամ ինտերակտիվ միջոցառումներ՝ հետազոտությունների արդյունքները ներկայացնելու, շահագրգիռ կողմերի միջև համագործակցությունը խթանելու և նորարարական ու գործընկերային ծրագրային գաղափարներ ներկայացնելու համար:
- Վերանայել կանանց զբաղվածությանը վերաբերող նախաձեռնությունները՝ հաշվի առնելով գործընկերների հետաքրքրվածության փոփոխական մակարդակը, որպեսզի դրանք մնան արդիական և արդյունավետ:
- Շարունակել խթանել այն ծրագրերը, որոնք անդրադառնում են տաբու համարվող թեմաներին, աջակցում են ֆեմինիստական շարժումներին և կիրառում են խնամքի համապարփակ մոտեցումներ՝ նպաստելով կանանց հզորացմանն ու ներառականությանը:
- Այլ դոնորների հետ կիսվել հաջող համագործակցության փորձով՝ խրախուսելով թափանցիկ և արդյունավետ գործընկերային հարաբերությունները:
- Կենտրոնացնել ջանքերը տեղահանված կանանց և աղջիկների համար նախատեսված ծրագրերի վրա՝ շարունակելով աջակցել նրանց բարեկեցությանը, անձնական զարգացմանը և կարողությունների ամրապնդմանը:
- Առաջարկել փոխանակման այցերի, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, ինչպես նաև դրամաշնորհային հնարավորությունների ընդլայնման ծրագրեր՝ նպաստելով գործընկերների կարողությունների զարգացմանն ու համագործակցության խորացմանը:

2024 թվականին հիմնական առաջարկություններն էին.

- Առաջարկել կարողությունների զարգացման դասընթացներ գործընկերների համար (ինչպես 2020 և 2022 թվականներին), սակայն այս անգամ՝ մասնակցային մոդելի դրամաշնորհավորհների տրամադրման (participatory grantmaking) թեմայով:
- Ստեղծել փոխանակման այցերի, գիտելիքների փոխանակման և միջազգային ֆեմինիստական ցանցերի հետ գործընկերությունների հնարավորություններ (ինչպես 2020 և 2022 թվականներին):
- Ապահովել ավելի երկարաժամկետ ծրագրեր և մեծացնել ֆինանսավորման ծավալները, քանի որ դա հնարավորություն կտա իրականացնելու ավելի համապարփակ և կայուն նախաձեռնություններ, հասնել ավելի մեծ թվով շահառուների և արդյունավետորեն արձագանքել երկարաժամկետ մարտահրավերներին:
- Ներառել կարողությունների ամրապնդման ծրագրեր, որոնք ուղղված կլինեն կազմակերպությունների կայունության և գործառնական կայունության ապահովմանը:
- Հարմարեցնել բովանդակային (նարատիվ) հաշվետվությունների ձևաչափերը յուրաքանչյուր դրամաշնորհի առանձնահատկություններին՝ ապահովելով հաշվետվությունների համապատասխանությունը ծրագրերի յուրահատուկ բնույթին:
- Ուսումնասիրել և զարգացնել մինչ այժմ քիչ անդրադարձած թեմաներ, ինչպիսիք են տարածաշրջանային համագործակցությունը, կանանց տնտեսական հզորացումը և գենդերազգայուն քաղաքային զարգացումը:
- Շարունակել առաջնահերթ աջակցություն ցուցաբերել մարգինալացված կանանց՝ միաժամանակ ընդլայնելով նախաձեռնությունները, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող կանանց, տեղահանված կանանց և գյուղական համայնքների կանանց առանձնահատուկ կարիքներին:
- Ստեղծել հարթակներ, որտեղ գործընկերները կարող են կիսվել փորձով, համագործակցել ծրագրերի շուրջ և համատեղ մշակել նոր գաղափարներ:
- Ավելացնել գործընկերների ներգրավվածությունը Հիմնադրամի ռազմավարական որոշումների կայացման գործընթացներում, ներառյալ առաջնահերթությունների սահմանումը, ծրագրերի մշակումը և ազդեցության գնահատումը:
- Ավելի լայն լսարանների, այդ թվում՝ այլ դոնորների և շահագրգիռ կողմերի հետ կիսվել մասնակցային դրամաշնորհային գործընթացի հաջողության պատմություններով և քաղված դասերով:

2025 թվականին առաջարկությունները զգալիորեն տարբերվում էին նախորդ տարիների գնահատումներից: Հիմնական առաջարկություններն էին.

- Դրամաշնորհային հայտերի ներկայացման ընթացակարգերը աստիճանաբար դարձնել որոշ չափով ավելի պահանջկոտ՝ նպաստելու կազմակերպությունների ծրագրային առաջարկների մշակման և ծրագրերի կառավարման կարողությունների զարգացմանը, ինչպես նաև՝ նրանց մրցունակության բարձրացմանը միջազգային խոշոր ֆինանսավորման հնարավորությունների համար:
- Ապահովել հայտադիմումներին նախապատրաստվելու ավելի երկար ժամկետներ, լրացուցիչ խորհրդատվություն և ուղղորդում առաջին անգամ դիմող կազմակերպությունների համար, ինչպես նաև մշակել աջակցող նյութեր սահմանափակ դրամաշնորհային փորձ ունեցող կազմակերպությունների համար:
- Ապահովել ավելի շարունակական հաղորդակցություն և միջանկյալ հետադարձ կապ ծրագրերի իրականացման ընթացքում: Գործընկերները նշել են, որ կանոնավոր հաղորդակցությունն ու ճկուն աջակցությունը կարող են օգնել կազմակերպություններին ավելի արդյունավետ արձագանքել փոփոխվող իրավիճակներին և համայնքների նոր կարիքներին:
- Ապահովել ավելի մեծ ճկունություն ծրագրային առաջարկների ձևաչափերում՝ ներառյալ ոչ միայն գրավոր հայտերի, այլև տեսողական կամ մուլտիմեդիա ներկայացումների օգտագործման հնարավորությունը:
- Ստեղծել մեխանիզմներ, որոնց միջոցով փոքր դրամաշնորհներ հաջողությամբ իրականացրած կազմակերպությունները ժամանակի ընթացքում կարող են ստանալ ավելի խոշոր ֆինանսավորման հնարավորություններ:

Ամփոփում

Ընդհանուր առմամբ՝ հինգ գնահատումների արդյունքները ցույց են տալիս հստակ միտում: Գրեթե բոլոր գործընկերները բարձր են գնահատել Հիմնադրամի հետ համագործակցությունը, իսկ նրանց կողմից նշված մարտահրավերները հիմնականում ունեցել են արտաքին կամ կազմակերպչական բնույթ: Արդյունքները վկայում են, որ գործընկերների կողմից ներկայացված առաջարկությունները՝ կապված իրենց կարիքների, Հիմնադրամի հետ համագործակցության, դրամաշնորհային հայտերի գործընթացի կամ ապագա թեմատիկ ուղղությունների հետ, մշտապես հաշվի են առնվել հիմնադրամի կողմից:

Թեև որոշ մարտահրավերներ, ակնկալիքներ և առաջարկություններ կրկնվում են տարեցտարի, յուրաքանչյուր գնահատման ընթացքում ի հայտ են գալիս նաև նոր հարցադրումներ: Սա կարող է վկայել այն մասին, որ նախկինում բարձրացված որոշ խնդիրներ լուծում են ստացել, կամ որ գործընկերներն ավելի բաց և վստահ են դարձել իրենց կարիքներն ու ակնկալիքները բարձրաձայնելու հարցում:

Կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումների անհրաժեշտությունը, ինչպես նաև շարունակական ֆինանսական աջակցության և ավելի խոշոր դրամաշնորհների տրամադրումը շարունակում են մնալ բոլոր տարիների գնահատումներում առավել հաճախ նշվող առաջարկությունները: Ակնկալիքների շարքում ամենաշատը նշվում են այլ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ գործընկերային համագործակցության հնարավորությունները, ինչպես նաև այլ երկրներ փոխանակման այցերի մասնակցության հնարավորությունները, որոնք, ըստ գործընկերների, շատ կարևոր կլինեն իրենց կարողությունների զարգացման և ծրագրերի արդյունավետ իրագործման համար:

WOMEN'S FUND ARMENIA

Yerevan, 2026